ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ
ՁՈՐ ՄԱՐԶԻ ՋԵՐՄՈՒԿԻ ԹԻՎ 3
ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ

ВАЙОЦ ДЗОРСКАЯ ОБЛАСТЬ
СРЕДНЯЯ ШКОЛА 3
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ Г.
ДЖЕРМУК

3703

Հեռ. 94999201

11.10. 2023թ .

3703

email
jermuk3@schoolos.am

ՀՀ ԿԳՄՄՆ կրթության գլխավոր քարտուղար

Հ. Հակոբյանին

Մրցույթ՝ ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկի թիվ 3 միջնակարգ ՊՈԱԿ-ի ֆիզկուլտուրա (19 դասաժամ), կենսաբանության (10 դասաժամ), առարկաների ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (ձև 1),

- 1 լուսանկար 3x4 չափի,

- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),

- անձը հաստատող փաստաթուղթ,

- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

- ինքնակենսագրություն (ձև 5),

- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,

- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են հոկտեմբերի 11 -ից մինչև հոկտեմբերի 24 -ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2023 թ. հոկտեմբերի 26 -ին՝ ժամը 14:00-ին, ՀՀ Վայոց Ձոր մարզի Ջերմուկի թիվ 3 միջնակարգ դպրոցում հասցե՝ք. Ջերմուկ գյուղ Կեչուտ 8փ/9շ: Տեղեկությունների համար զանգահարել 094-99-92-01 հեռախոսահամարով:

Դպրոցի տնօրեն՝ Ս. Ստեփանյան